

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԿՐԿՆԱՎՈՐ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՂԱՊԱՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ  
և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԸ ՊԱՐՄԿԵՐԵՆՈՒՄ

ՄԱՐԻԱ ԱՅՎԱԶՅԱՆ-ԹԵՐԶՅԱՆ (Իրան)

*Համադրական (սինթետիկ) բարդությունները ենթադրում են լեզվի զարգացման ավելի բարձր մակարդակ: Դրանք ավելի ուշ գոյացություններ են, քան վերլուծական կազմությամբ բարդությունները:*

*Համադրական կոչվում են այն բարդությունները, որոնց բաղադրիչները միացած են սերտ ու անտրոհելի կապով և կազմում են մեկ բառական միավոր: Այդ կառույցների բառաքերականական հիմնական բնութագրերը, որոնք պետք է հաշվի առնվեն մեր հետազոտ քննության ընթացքում, հետևյալներն են:*

*1. Համադրական բարդությունները կազմվում են երկու կամ ավելի հիմնական ձևերից կամ իբրև այդպիսիք ընկալվող բառ-բաղադրիչներից, ինչպես՝ առաջադիր, առաջատար, բարեկամ, պատմաբան, գրագետ, դասընկեր, երկսերմնապտուղ, եռապարսպապատ և այլն:*

*2. Անկախ բաղադրիչների քանակից՝ բաղադրությունը ամբողջացած է արտաբերությամբ և ունենում է բառական մեկ շեշտ, գրությունը՝ միասնական է, անանջատ, նաև առանց միացման կամ անջատման գծիկի (տե՛ս նախորդ կետի օրինակները):*

*3. Բարդության պարզագույն կամ նվազագույն արտահայտությունը երկձևությո կադապարն է, որից հաջորդաբար կարող են կազմվել նորանոր բաղադրություններ. հմմտ. գրադարան > գրադարանագետ > գրադարանագիտաճյուղ, գյուղատուն > գյուղատնտես և այլն:*

*4. Անկախ իր կազմում եղած ձևերից թվից ու տեսակից, միշտ բաղկացած է լինում բաղադրական երկու մասերից, որոնք կոչվում են բաղադրական հիմքեր<sup>1</sup>: Առաջին մասը պայմանականորեն կարելի է կոչել առաջնային բաղադրական հիմք, երկրորդը՝ երկրորդային բաղադրական հիմք: Երկրորդային հիմքը օրինակաչափորեն հանդես է գալիս որպես վերջին գործողության (քայլի) արդյունք: Օրինակ՝ քաղաքատուն բառը կազմված է երկու հիմքից, համապատասխանաբար՝ առաջնային՝ քաղաք և երկրորդային՝ տուն: Քաղաքատնտես բառի առաջ-*

<sup>1</sup> Էդ. Աղայանը բաղադրական հիմքերը ստորաբաժանում է հետևյալ ենթատեսակների՝ ա) պարզ (սրանք միաձևությո հիմքերն են, օր. գր+ա-սեղան, սար-ա-հարթ), բ) բաղադրյալ (սրանք բաղկացած են մեկից ավելի ձևերից (օր. հեռ-ա-խոս-ա-փող, մինչ+հեղ+ա+փոխ+ական), գ) գրական-ավանդական և դ) ժողովրդախոսակցական լեզվի բաղադրական հիմքեր (օր. շեղաչ, գեղաչյա և աչքաբաց, աչքածակ, ձեռագործ և ձեռքաբաց, այսինքն՝ գրաբարյան ք հոգնակերտով և առանց նրա): Տե՛ս Է. դ. Բ. Ա. դ. ա. յ. ա. ն. Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 247, 256-257:

նային հիմքը արդեն քաղաքատուն-ն է, երկրորդայինը՝ տես-ը: Քաղաքատնտեսագետ-ի առաջնային հիմքն է՝ քաղաքատնտես-ը, երկրորդայինը՝ գետ-ը և այլն: Առաջնային հիմքատարրը հաճախ կոչում են նաև նախատիպ կամ սկզբնատիպ:

5. Բաղադրական հիմքերը կարող են ներկայացված լինել նաև սկզբնական կամ նախնական տեսքով՝ որպես նախատիպ կամ սկզբնատիպ, կամ տարբերակներով: Վերջիններս լինում են տիպաբանական, որ կարելի է կոչել նաև ձևաբանական և հնչյունաբանական: Տիպաբանական հիմքատարրերակները պայմանավորված են բառակազմական ու ձևակազմական կենսունակ կամ անկենսունակ-արխաիկ (հնատիպ) ձևերի գործադրումով: Հմնտ. ձեռ//ձեռն//ձեռաց//ձերբ, որտեղ նախատիպը և կենսունակը առաջին տարբերակն է, մյուս երեքը անկենսունակ են, թեև բոլորն էլ տիպաբանական տարբերակներ են և հանդես են գալիս որպես բաղադրական հիմքեր (ձեռագրատուն, ձեռնամարտ, ձեռացագիր, ձերբակալել):

Հնչյունաբանական տարբերակները պայմանավորված են պատմական կամ շեշտափոխական հնչյունափոխության օրինաչափություններով: Հմնտ. ջուր//ջ(ը)ր, սեր//սիր, կին//կ(ը)ն//կան, գարեջուր, ջ(ը)րկիր, մարդասեր, սիրառատ, տիկին, կ(ը)նատյաց, կանացիակերպ և այլն:

6. Նկատի ունենալով բաղադրական հիմքերի դերն ու նշանակությունը բառակազմության մեջ՝ դրանք ընդունված է տեսակավորել երկու տիպերի՝ սերող և բաղադրող: Բաղադրության այն մասը, որը ներկայանում է իբրև սկզբնատիպ, որին հավելվում է մի այլ բաղադրամաս, կոչվում է սերող հիմք կամ սերող բաղադրահիմք: Այն մասը, որը ավելանում է սերող հիմքին, որով ըստ էության կազմվում է նոր բառ, բաղադրող հիմքն է: Բաղադրող հիմքը սովորաբար բարդության վերջին մասն է, իսկ դրան նախորդող մասը՝ սերող: Թե՛ սերող և թե՛ բաղադրող հիմքերը կարող են լինել միաձևույթ կամ բազմաձևույթ (երկձևույթ, եռաձևույթ և այլն)<sup>2</sup>:

7. Համադրական բարդության եզրերի կապը միատարր ու նույնական չէ: Կան բաղադրություններ, որոնց եզրերը (բաղադրական հիմքերը) ազատորեն կարելի է անջատել՝ բաղադրությունը վերածելով շարահյուսական սովորական կապակցության, առանց աղճատելու նախնական ընդհանուր իմաստը: Օրինակ՝ հորեղբայր, մորեղբայր, այստեղ, այդտեղ, տանտեր, տանտիկին և նման բառերի բաղադրիչները կարելի է տրոհել և գոյացնել գոյականական հատկացուցչային կամ որոշչային ազատ բառակապակցություններ, ինչպես՝ հոր եղբայր, մոր եղբայր, տան տեր, տան տիկին (հատկացուցչային), այս տեղ, այդ տեղ (որոշչային) և այլն:

Կան բարդություններ, որոնց բաղադրիչների կապը անհամեմատ սերտ է ու անտրոհելի, և բռնադատված ամեն մի տրոհում անխուսափելիորեն կաղճատի բառայինների ընդհանուր իմաստը: Օրինակ՝ հենց նոր տեսանք, որ հորեղբայր և մորեղբայր բառայինների եզրերի կապը թույլ է ու տրոհելի: Կարող ենք ասել ու գրել այնպես, ինչպես որ գրված է, բայց նաև՝ հոր եղբայր և մոր եղբայր: Իմաստի

<sup>2</sup> Սերող և բաղադրող հիմքերի մասին ավելի մանրամասն տե՛ս Է. Բ. Ա. ղ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 245-247:

կորուստ կամ փոփոխություն չկա: Բայց այդպես չէ, թվում է՝ նույն կամ նման կազմություն ունեցող հորաքույր բառույթի դեպքում: Այստեղ բաղադրիչների կապն արդեն անբաժանելի է, որովհետև հորա +քույր կադապարմով ժամանակակից հայերենում շարահյուսական կապակցություն չունենք:

Հայ քերականագիտության մեջ առաջինները ավանդաբար ընդունված է եղել կոչել անիսկական (տվյալ ենթատեսակը՝ կցական) բարդություն, երկրորդները՝ իսկական<sup>3</sup>: Որոշ քերականներ առաջարկում են նաև այլ մի դասակարգում՝ հոդակապով և անհոդակապ բարդություններ<sup>4</sup>: Անկախ դասակարգման սկզբունքներից՝ մի բան ակնհայտ է, որ երկու դեպքում էլ գործ ունենք համադրական բաղադրությունների հետ:

Մեր նպատակներից դուրս համարելով համադրական բարդության տիպաբանական հարցերի քննությունը՝ այստեղ կանգ կառնենք միայն կրկնավոր բարդություններից կազմված համադրական բաղադրությունների վրա և կփորձենք ցույց տալ հայերեն համապատասխան կառույցների բառաքերականական բնութագրերը և այդ կառույցների հոմանիշային արտահայտությունները ժամանակակից պարսից լեզվում:

Հիմնական ձևույթի կամ արմատի կրկնությամբ իմաստի զորեղացումը, հավաքականություն կամ նոր իմաստ արտահայտելը հայերենի, նմանապես նաև պարսկերենի լեզվամտածողության բնորոշ հատկություններից մեկն է եղել և է՝

Բառակրկնությունը բառաբաղադրության տեխնիկայի հնագույն արտահայտությունն է: Արմատի կրկնությամբ կարող են կազմվել ոչ միայն վերլուծական բաղադրություններ, այլև համադրական: Համադրական կրկնավոր կամ կրկնական բարդությունները ներկայացնում են միևնույն բառի կամ արմատի և կամ հիմնական ձևույթի ամբողջական կամ մի մասի կրկնությունը՝ մեկ բառույթի սահմաններում, ինչպես բարբառ (բառ+բառ), զրզիռ (զիռ+զիռ (կամ գիր+գիր) անձանոթ արմատից], թրթիռ /թիռ+թիռ/, ծակուծուկ (ծակ + ու+ ծակ> ծակուծուկ), կափկափել (կափ+կափ+ել), չափչփել (չափ+չափ+ել) և այլն<sup>5</sup>:

Համադրական կրկնավոր բարդությունները հայերենում և դրանց համարժեքները պարսկերենում բնորոշվում են իմաստային ու ձևակազմական ճոխ ու հարուստ արտահայտություններով: Դրանց քննությունը ի հայտ է բերում բառակազմական հետևյալ օրինաչափությունները:

1. Համադրական կրկնավոր բարդությունները, արտաքին տեսքով նման լինելով կցական և իսկական բարդություններին, էությանմբ ու կառուցվածքով տարբերվում են թե՛ մեկից, թե՛ մյուսից: Կցական բարդություններից տարբերվում են նրանով, որ նրանց նման չունեն բաղադրիչների ստորադասական՝ լրացում-

<sup>3</sup> Մ. Աբեղյան. Երկեր, հ. 2, Երևան, 1974, էջ 137 և հուն, Գ. Մ և ա կ. Ժամանակակից հայոց լեզվի դասարկում, Երևան, 1955, էջ 143–182, Է. դ. Բ. Ադամյան. նշվ. աշխ., էջ 207–310, Մ. Գ. Կարսյան. Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978, Ա. Մ. Մարգարյան. ժամանակակից հայոց լեզու (Բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Երևան, 1990, էջ 4–185:

<sup>4</sup> Ա. Գ. Աբրահամյան. ժամանակակից գրական հայերեն, Երևան, 1981, էջ 90–93:

<sup>5</sup> Այս մասին տե՛ս նաև Գ. Մ և ա կ. նշվ. աշխ., էջ 166 և հուն., Է. դ. Բ. Ադամյան. նշվ. աշխ., էջ 275 և հուն, Ա. Մ. Մարգարյան. նշվ. աշխ., էջ 54 և հուն.:

լրացյալի շարահյուսական հարաբերություններ (հորեղբայր → հոր+եղբայր. հատկացուցիչ-հատկացյալի հարաբերություն. այստեղ → այս+տեղ. որոշիչ-որոշյալի հարաբերություն և այլն):

Բնական բարդություններից տարբերվում են նրանով, որ նախ՝ նրանց նման չունեն բաղադրական հիմքեր՝ իրենց տարբերակներով: Երկրորդ՝ համադրական կրկնավոր բարդության թե՛ առաջին և թե՛ երկրորդ եզրը ինքը կրկնվող արմատն է կամ բառը՝ ամբողջությամբ կամ մի մասով, հնչյունափոխված կամ անհնչյունափոխ: Օրինակ՝ գունդագունդ, դեզադեզ, ծուռուծուռ, բազմաբազում և այլն:

2. Կրկնավոր բարդության բաղադրիչները հայերենում կարող են կապակցվել առանց նշույթի կամ նշույթով: Իբրև նշույթ օգտագործվում են ու, և համադասական շաղկապները, առ, գ, ընդ, ըստ, ի նախադրությունները, ա հոդակապը: Այսպես՝ աննշույթ. գոռգոռալ, գրգիռ, թրթիռ, կցկցել, վազվզել, փայլփլել և այլն: Նշույթով՝ մեկաումեկ, միաումի, մեկգմեկ, մերթընդմերթ, միբսամիոջե, մեկենիմեկ և այլն:

Պարսկերենը այս կետում որոշակի շփման եզրեր ունի հայերենի հետ: Այստեղ ևս բաղադրիչները կարող են կապակցվել առանց նշույթի՝ գուտ հնչերանգային միավորմամբ կամ **g** (**u, va**), **h** (**bi**) համադասական շաղկապներով: Հմմտ. հայ. գրական լեզվում և բարբառներում վկայված՝ գույնգույն // գույնագույն // գունագույն // գունագունակ: Պարսկերենը նմանատիպ բաղադրություններ ունի և՛ նշույթով, և՛ աննշույթ. **جور واجور (djūr-va-djūr)**, **جور به جور (djūr-bi-djūr)**, **جوراجور (djūr-ā-djūr)**, **رنگ به رنگ (rang-bi-rang)**, **رنگ وارانگ (rang-vā-rang)**, **رنگارنگ (rang-ā-rang)**, **گونه گون (gūn-i-gūn)**, **گون گون /gūn-gūn/** և այլն<sup>6</sup>:

Նկատելի է, որ պարսկերենը նույն իմաստի համար ունի հոմանիշային բավականաչափ հարուստ շարք՝ կազմված բառակազմական գրեթե նույն կաղապարով, ինչ որ ունի հայերենը:

Մեկ այլ օրինակ: Հայերենում ունենք դայլայլ /ել/ բառը, որ կազմված է «կրկնված դայլ պարզական արմատից, որ թերևս բնաձայն է»<sup>7</sup> դայլ+դայլ >դայլայլ +ել (դայլայլել): Եզրերը կապակցվել են աննշույթ: Մրա իմաստը նույն կաղապարով և նույն կառուցվածքով ունի նաև պարսկերենը, և զարմանալին այն է, որ գրեթե նույն հնչյունակազմով, նույնպես՝ աննշույթ՝ **دلی دلی کردن (diliy diliy kardan)** կամ **دلی دلی کردن (dil-iy-dil-iy kardan)**:

<sup>6</sup> Պարսկերենում կրկնավոր բարդությունների կառուցվածքի և կաղապարման հատկանիշների մասին տե՛ս նաև՝ M. S h a k i. A Study on Nominal Compounds in Neo-Persian. Praha, 1964, Л. С.

П е й с и к о в. Очерки по словообразованию персидского языка. М., 1973; Ն ը լ յ ն ի՝ Лексикология современного персидского языка. М., 1975; Ю. А. Р у б и н ч и к. Фразеология персидского языка, М., 1981, M. A y v a z y a n - T e r z y a n. Iterative and Analytical Compounds in Armenian and Their Synonymous Equivalents in Persian, Cleveland State University Program in Linguistics, 2006 Հայերենի կրկնավոր բարդությունների և պարսկերենում դրանց համարժեքների ամբողջական ցանկը տե՛ս մեր բառարանում. Մ. Այվազյան-Թերզյան. Կրկնավոր բարդությունները հայերենում և դրանց հոմանիշները պարսկերենում, Թեհրան, 2006:

<sup>7</sup> Հ. Ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 619:

Երկու լեզուներում էլ նույն իմաստն են արտահայտում՝ ձայնը կլկլացնելով, գեղգեղանքով, խաղացնելով երգել (մարդու և թռչունների մասին):

3. Համադրական կրկնավոր բարդությունները ծագումով շատ հաճախ առնչվում են հարադրական կրկնավոր բարդություններին՝ սրանց բաղադրիչների միավորումով մեկ համադրական բառույթի մեջ: Միավորումը կատարվում է պարզ կցման եղանակով. պահպանվում են շաղկապներն ու նախադրությունները, եթե, հարկավ, կան, եթե ոչ՝ հաճախ հավելվում է ա հոդակապը: Հմմտ. մեջ ընդ մեջ > մեջընդմեջ, մեկ առ մեկ > մեկառմեկ, օր ըստ օրե > օրըստօրե, ինքն ըստ ինքյան ( ինքնըստինքյան, բազում-բազում ( բազմաբազում, կարմիր-կարմիր (կարմրակարմիր, գունդ-գունդ (գունդագունդ և այլն):

Առաջին կետում նշվեց, որ համադրական կրկնավոր բարդության եզրերը չեն կարող կապակցվել ստորադասական հարաբերությամբ, չեն կարող ներքին կամ խորքային շարահյուսական աղերսով գոյացնել լրացում-լրացյալի կապակցություն: Ունեցել ենք և ունենք՝ բերանից բերան (հայտնել, ասել, պատմել, հնչել և այլն), գյուղից գյուղ (գնալ, գալ և այլն), տնից տուն (գնալ, գալ և այլն) և նման բազում կապակցություններ, որտեղ գուցորդության առաջին եզրը արտահայտված է բացառական, երկրորդը՝ ուղղական (յոթ հոլովի համակարգում՝ հայցական) հոլովով: Երկու եզրերն էլ առանձին-առանձին տեղի պարագաներ են, որ լրացնում են փակագծված բայերին, ինչպես՝ տնից տուն (գնալ, գալ և այլն): Ժողովրդական-խոսակցական լեզվում բացառականը սովորաբար արտահայտվում է ե (է) ձևությամբ՝ տնե (տնէ) տուն: Այս միավորները թեև երկուսն էլ տեղի պարագաներ են, բայց շարահյուսորեն իրար հետ ոչ մի առնչություն չունեն, մանավանդ ստորադասական: Այդ իսկ պատճառով միավորվում են ու կազմում յուրօրինակ համադրական կրկնավոր բարդություն, որտեղ եզրերը կապակցված են հոլովական ե (է) թեքությամբ՝ բերնեբերան, գյուղեգյուղ, դոնեդոու և այլն:

Պարսից լեզվում հոլովի քերականական կարգի բացակայության պատճառով այս տիպի համադրական կրկնավորների եզրերը կապակցվում են վերը նշված եղանակով՝ շաղկապով, շաղկապական մասնիկներով կամ աննշույթ: Հմմտ. դրենդուռ = در به در (dar-bi-dar): Եզրերը կապակցված են به սպասարկու բառիկով՝ նախդրով. քաշեքաշ (քաշքշելով, քարշ տալով), كشان كشان (kišān-kišān), խազեխազ (գիծ առ գիծ, մի գծից մինչև մյուս գիծը = ծուռումուռ) , خط خط (xaṭ -xaṭ , բոց. գիծ-գիծ) , خط خطی (xaṭ(t)-xaṭ(t)-ī, բոց. գիծ առ գիծ), պոնկեպունկ (մինչև պոունկները, լեփ-լեցուն, լրիվ լցված). لب به لب (lab-bi-lab), لبالب (lab-ā-lab, բոց. շուրթը՝ շրթին), որտեղ به -ն նույն սպասարկու բառիկն է, նախդիր՝ տրական հոլովի նշանակությամբ, ʾ -ն՝ մասնիկ-հավելադրություն:

4. Հայտնի է, որ հայերենում վերլուծական կրկնավորների եզրերը շատ դեպքերում ենթարկվում են հնչյունափոխության: Նույնը ավելի մեծ չափերով ու առավել անսովոր, պետք է ասել՝ հաճախ դժվար բացատրելի ու դժվար սահմանվող արտահայտություններով գտնում ենք համադրական կազմությամբ կրկնավորների մեջ: Դիտելի են հնչյունափոխության հետևյալ դրսևորումները:

Ա. Շեշտափոխական հնչյունափոխություն:

ա/ Առաջին բաղադրիչի ի շեշտակորույս ձայնավորը փոխվում է չգրվող ւ-ի, ինչպես՝ գիռ+գիռ > գ/ը/րգիռ, թիռ+թիռ > թ/ը/րթիռ<sup>8</sup>։

բ. Երկրորդ բաղադրիչի նույն ձայնավորը նույնպես կարող է փոխվել չգրվող ւ-ի, այլ կերպ ասած՝ կրկնվող երկու բաղադրիչների էլ ի ձայնավորը փոխվում է չգրվող ւ-ի, ինչպես՝ գիռ+գիռ > գ/ը/րգ/ը/ռեղ, թիռ+թիռ > թ/ը/րթիռ > թ/ը/րթ/ը/ռալ, կից+կից > կ/ը/ցւ/ը/ցեղ, ծիվ+ծիվ > ծ/ը/վծ/ը/վալ, միտ+միտ > մ/ը/տւ/ը/տալ և այլն։

գ/ Երկրորդ բաղադրիչի ո (օ) ձայնավորը վերածվում է չգրվող ւ-ի, ինչպես՝ դող+դող+ալ > դողդ/ը/դալ, ցոլ+ցոլ+ալ > ցոլց/ը/լալ, ջոկ+ջոկ+ել > ջակջ/ը/կեղ, փոռ+փոռ+ել > փոռփ/ը/րեղ և այլն։

դ/ Երկրորդ, հազվադեպ՝ ն՝ առաջին, և՝ երկրորդ կրկնվող եզրերի ա ձայնավորը փոխվում է չգրվող ւ-ի, ինչպես՝ թափ+թափ+ել > թափթ/ը/փեղ, խազ+խազ+ել > խազխ/ը/զեղ, ծակ+ծակ+ել > ծակծ/ը/կեղ, կապ+կապ+ել > կապկ/ը/պեղ, ճաք+ճաք+ել > ճաքճ/ը/քեղ, չափ+չափ+ել > չափչ/ը/փեղ, պաչ+պաչ+ել > պաչպ/ը/չեղ, ջախ+ջախ+ել > ջախջ/ը/խեղ, փայլ+փայլ+ել > փայլփ/ը/լեղ և այլն։

Բ. Փոխազդեցական հնչյունափոխություն։

ա) Առաջին բաղադրիչի ո բազմաթիվ վերջնաբաղաձայնը երկրորդ բաղադրիչի նույն բաղաձայնի ազդեցությամբ, ետընթաց տարնմանության օրենքով, փոխվում է ր միաթիվ ձայնորդի (ր < ո), ինչպես՝ բառ+բառ > բարբառ, բարբառեղ, գիռ+գիռ > գրգիռ, գրգռեղ, թիռ+թիռ > թրթիռ, թրթռալ, թրթռուն, սառ/ը, ն/ + սառ/ը, ն/ > սարսռալ և այլն։

բ) Առաջին եզրի բարդ ծ վերջնահնչյունը ետընթաց տարնմանությամբ փոխվում է պարզ ս խույ սուլականի, ինչպես՝ կիծ+կիծ > կսկիծ, կարծ+կարծ > կածկած > կասկած և այլն։

գ) Հնչյունի անկումը ոմանք համարում են փոխազդեցական հնչյունափոխության արտահայտություն, ոմանք՝ պատմական։ Անկախ դրանից՝ կրկնավորներից գոյացած համադրական բարդության մեջ օրինաչափ երևույթ է բաղաձայնի անկումը։ Այդպես օտարվել-դուրս ընկնել կարող են և՝ առաջին, և՝ երկրորդ բաղադրիչների որոշ բաղաձայններ։ Ըստ այդմ՝ օտարվում է կա՛մ առաջին բաղադրիչի վերջին, կա՛մ երկրորդ բաղադրիչի առաջին հնչյունը։ Հմնտ. բախ+բախ+ել > բախբախեղ > բաբախեղ (այլն՝ բաբախյուն, բաբախուն), դար+դար > դադար (դադարեղ), կազ+կազ > կակազ /կակազեղ/, փոխ+փոխ+ել > փոփոխեղ (առաջին բաղադրիչի վերջին հնչյունն է օտարվել). հեղ+հեղ > հեղհեղ > հեղեղ, հոտ+հոտ+ել > հոտհոտեղ > հոտոտեղ (երկրորդ բաղադրիչի առաջին բաղաձայնն է օտարվել)։

դ) Շատ հաճախ կրկնավոր բարդության առաջին բաղաձայնը փոխվում է մ-ի։ Այս երևույթը բնորոշ է առաջին հերթին վերլուծական կազմությամբ կրկնավորների։ Այստեղից էլ այն թափանցում է համադրական կազմությունների մեջ։ Չմոտանանք, որ վերլուծական կազմությունները ավելի հին գոյացություններ են,

<sup>8</sup> չայերենում կրկնավոր բարդությունների մեջ տեղի ունեցող հնչյունափոխության մասին տե՛ս նաև Ա լ. Մ ա ր գ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 60 և հտն։ Պարսկերենում համանման կառույցներում կատարվող հնչյունափոխության մասին տե՛ս՝ Գ. Մ ե լ ի ք յ ա ն. Կրկնավոր և հարադրավոր բարդությունների և գուգորդությունների պարսկերեն-հայերեն բառարան, Երևան, 2008, Առաջաբան, էջ 13-14։

*քան համադրական ձևերը: Հմմտ. խազ+խազ+ել > խզ+խզ+ել > խզմզել, գիծ+գիծ+ել > գծ+գծ+ել > գծմծել, կից+կից+ել > կց+կց+ել > կցմցել, խինդ+խինդ+ալ > խնդ+խնդ+ալ > խնդմնդալ և այլն:*

*ե) Առաջին բաղադրիչը կարող է անձանաչեյիորեն փոխվել՝ պահպանելով ու անփոփոխ պահելով, որքան էլ զարմանալի թվա, միայն առաջին բաղաձայնը: Հմմտ. լեցուն + լեցուն > լեփ-լեցուն > լեփլեցուն, կարմին+կարմիր > կաս-կարմիր > կասկարմիր, ճերմակ+ճերմակ > ճեփ-ճերմակ > սպիտակ+սպիտակ > սիպ (սիփ) -սպիտակ > սիպսպիտակ (սիփսպիտակ), սև+սև > սիպ -սև > սիպսև և այլն:*

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ МОДЕЛИРОВАНИЯ  
СИНТЕМАТИЧЕСКИХ ИТЕРАТИВНЫХ СЛОЖНЫХ СЛОВ  
В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ И ИХ ЭКВИВАЛЕНТЫ  
В ПЕРСИДСКОМ ЯЗЫКЕ

*МАРИЯ АЙВАЗЯН-ТЕРЗЯН (ИРАН)*

Р е з ю м е

Сравнительно-исторический анализ лексико-грамматических характеристик моделирования сложных слов, состоящих из повторов корней или первичных морфем в армянском языке и их синонимических эквивалентов в современном персидском языке позволяет сделать следующие заключения.

1. Усиление сематического состава слова, выражение собирательности или нового словарного значения путем повтора корня или первичной морфемы является одной из характерных особенностей армянского и персидского мышления.

2. Итеративные сложные слова в исследуемых двух языках имеют в основном сходное моделирование. Иногда проявляются и различия.

3. Второй компонент сложного слова ничто иное, как первый компонент в его полном объеме или часть его.

4. В армянском языке синтетические итеративные сложные слова очень простого соединения компонентов (напр. *մէջ ընդ մէջ* /«иногда»/ *մէջընդմէջ*). В персидском языке нет такой конструкции.

5. Как первый, так и второй компоненты синтематических итеративных сложных слов в армянском языке могут подвергаться чередованию звуков. Притом чередуются как гласные, так и согласные звуки.

В отличие от армянского языка в персидском чередоваться могут звуки только второго компонента.

---

SOME CHARACTERISTICS OF MODELING SYNTHETIC ITERATIVE COMPOUND  
WORDS IN ARMENIAN AND THEIR EQUIVALENTS IN PERSIAN

MARIA AYVAZYAN-TERZYAN (IRAN)

S u m m a r y

Comparative-historical analysis of lexico-grammatical characteristics of modeling compound words, composed of root repetition or primary morphemes in Armenian and their synonymous equivalents in modern Persian let us make the following conclusions.

1. Reinforcement of words' semantic composition, the expression of collecting or new vocabulary meaning in the way of root repetition or primary morpheme is one of the special characteristics of Armenian and Persian languages' thinking.

2. The iterative compound words in research of two languages have similar modeling. Sometimes differences are appeared.

3. The second component of compound word is nothing but the first component with its whole space or part of it, drawing automatic alternation or without alternation.

4. In Armenian the synthetic iterative compound words are often formed from similar analytic compound words by simple combination of components (e. g. *վեջ ընդ վեջ* /=sometimes/ *վեջ ընդ վեջ*). There is no such construction in Persian.

5. The first and the second components of synthetic iterative compound words in Armenian can be subject to automatic alternation. In addition both vowels and consonants are alternated.

Unlike Armenian, in Persian only the second component sounds can be alternated.